

ՀԱՍՅԷ

M. ARCHAM
Poste Restante
ATHENES (Grèce)Փոսթին ծախքը խմբա-
գրութեան կը պատկանի:

ՄԻՈՒԹԻՒՆ

Ա Մ Ս Ա Թ Ե Ր Թ

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

Ա - ՏԱՐԻ

ՄԱՐՏ 1897

ԱԹԵՆՔ

ԹԻԻ

ԺԱՄԱՆԱԿԸ

ՀԱՄԱՄ Է

Ահա, հայ ժողովուրդ, Եւրոպ. տիպամիութիւնը ահամայ սկըսած ձեռք առնել Արեւելեան խնդիրը լուծելու, և անոր վերջնական որոշում մը տալու. արեւելեան հարստահարեալ քրիստոնեայ ժողովրդի խանգարումը կարգը վերահաստատելու համար: Այս առթիւ ամէն տերութեանց՝ ամէն ազգութեանց՝ և ամէն երկիրներու մէջ, մի արտասովոր քաղաքական, զինուորական և ժողովրդական շարժում կը տեսնուի, այս ամէն պատրաստութիւնները ինչո՞ւ և որո՞ւ համար կ'ըլլան, անշուշտ ընթերցողը, դիւրին կարող է ըմբռնել թէ՛ այն գիշատիչ և վայրենի Գայլին համար, որ դարերէ ի վեր մտած է ոչխարներու հօտին մէջ և անընդհատ կը կեղեքէ և կը գիշատէ զանոնք: Քաղաքակիրթ ազգութիւնները այլ ևս բաւական կը համարին հանդուրժել այն արարքները, որ նախատինք և արատաւորութիւն կը բերեն իրենց կրօնին ու ազգութեան և այսօր ամենը մէկ ոտքի ելած կը գոչեն. այլ ևս ժամանակը հասած է, որ սպաննուի ընդհ. քրիստոնէութեան սիրտը կրծող Գայլը այսօրն Մոսկովեան վայրենի ցեղը, որուն պետն է Մեծ-Ռճրագործ Սուլթան Համիտ Խան Բ.:

* * *

Կը կրկնենք մեր խօսքը թէ՛ «ժամանակը հասած է, » յորում թուրք կայսրութիւնը կը կազմալուծուի և անոր քաղցած ժառանգորդները կը մըլուին դէպի հրդեհի վայրը, կռուելով իրարու դէմ՝ կ'ուզեն իրենց բաժին:

Ներք ձեռք բերել: Եւրոպ. դրահաւորներու Կրետէի յեղափոխականներուն դէմ ըրած ուժակոծումն և դիւանագիտական դաշինքներու բռնած քաղաքական ընթացքը իբր թէ համաձայնութիւն գոյացած չ'է հիւսնական կառավարութեան դէմ բռնութիւն ի գործ դնել, միւս կողմանէ իբր թէ կ'ուզեն թուրք կայսրութեան գոյութիւնը անխախտ պահել, այս ամենը ձեւակերպութիւններ միայն կը ընանք համարել, որովհետեւ այսօրեայ մեր առջև պարզուած խնդիրները գոնէ այնպէս կը հաւատացնեն մեզ թէ, այս ամէն դիւանագիտական խաղերը՝ թուրք կառավարութեան գլխին վրայ կը խաղցուին, որը մօտալուտ ժամանակի մէջ պիտի տեսնենք:

* * *

Իսկ մենք, հայերս, այս վտանգալի վայրկեաններու մէջ, այս ահագին նախապատրաստութեանց առջև՝ ձեռնամած և գլխակոր ինչ կը մտածենք մեր ներկային համար, և ինչ կը խորհինք մեր անորոշ ապագային վրայ. չ'է որ այս բոլորիս արեւելեան ժողովրդի ապագայ կեանքի բարեօրման կամ բոլորովին կորստեան ճակատագիրը յայտնուելու դժուար ճամբուն մէջ կ'ընթանայ: Տակաւին մինչև երբ պիտի շարունակուի մեր ներքին կռիւները, անմիաբանութիւնը և կուսակցական վէճերը, որոնք ուրիշ բանի չ'են ծառայել, եթէ ոչ իրաց այս զարհուրելի վիճակին մէջ Մայր-Հայաստանի ձեռքերը և ոտքերը կ'ալի ու ուղղակի յանձնել մի բռնաւորի, որ աւելի հզօր և զօրաւոր է քան զթուրքիս, նա՛ աւելի դիւրին կարող է մարտել, կ'ընելով ամբողջ Հայաստանը և ռուսացնել մեր ժողովուրդը:

ինչպէս Բալոնիան:

Այս տխուր հանգամանքներու հետեանքը եթէ ապագայ պատմութեան և է էջերու մէջ յիշատակուի, ո՞վ պիտի ճանչցուի անոր պատասխանատու, անշուշտ մեր գործիչները, որոնք հայ ժողովրդի սանձը ձեռք առած կ'առաջնորդեն զայն կոյր զկուրոյն դէպի կորստեան ճանապարհը:

* * *

Գոհունակութեամբ կը տեսնենք որ Միութեան գաղափարը սկըսած է մուտ գտնել ժողովրդի ամէն իսաւրում մէջ, և գրեթէ իր յաջողութեան առաջին քայլը առած է: Ինչպէս կը զրեն մեզ մեր թղթակիցները, Ամերիկայի Պուկարիայի և արտասահմանի ուրիշ զանազան քաղաքներու մէջ յաճախ ժողովներ կը գումարուին, ճառախօսութիւններ կ'ըլլան ինպատ Միութեան գաղափարի: Ժողովատեղիներու մէջ հարկւրաւոր ազգայիններ միաձայն հաւանութեամբ որոշել են զրաւոր առաջարկներ ընել յեղափոխական կուսակցութեանց կեդրոններու, որ շուտով միանան: Ի բաց աստի «Միութիւն»ի հարցումներուն պատասխանող նամակներ ամէն երկիրներէ սկսած են տեղալ խմբագրութեանս, մինչև այսօր 183 նամակներ հասած են, որոնք ջերմ համակրանք ցոյց տալով Միութիւնը կը գոչեն. ասկէ կրնանք հետեցնել թէ՛ կուսակցական և ոչ-կուսակցական հայերու մեծամասնութիւնը՝ առանց բացառութեան, Միութիւնը կը պահանջէ, սակայն հետաքրքիր են նախ տեսնել թէ՛ մեր ազգային Զորքը այս անգամ պիտի գիշանին պատասխանել մեր գաղափարակից ընկերներու հրաւերին, թէ՛ Բարիգի

քովիթէին առաջարկին պէս կարեւորութիւն չ'տալով պիտի նետեն իրենց սենեակի մի անկիւնը փոշիներու մէջ:

* * *

Մենք Միութեան գաղափարակիրներս՝ ազգային կենսական շահերը պաշտպանելու համար, մինչև վերջին շունջ պիտի ջանանք կուսակցութիւններն ի մի ձուլել և կազմակերպել մի վստահելի վարչական կեդրոն, հրաւիրել գործի ձեռնհաս և ազդեցիկ անձնաւորութիւններ, սիրաշահել հարուստ դասակարգը և հաւաքել նըպաստներ, գոյացնել ներքին ոյժ և աւելի զօրութիւն տալ յեղափոխական գործին, որով միայն կարելի է ընդհ. շարժումով մը տապալել մեր թշնամին և մեր բաղձանքները իրագործել: Ահա այս է՝ և միշտ այս պիտի ըլլայ մեր պահանջը յեղափ. կուսակցութիւններէն:

Իսկ հակառակ պարագային եթէ անխելի մնայ մեր արդար ձայնը, իբրաւունք պիտի ունենանք հաւատալով թէ՛ կուսակցութեանց պաշտօնական թերթերը փոխանակ ժողովրդի օրկան ըլլալու, ժողովուրդը իրենց թերթերու օրգան ըրած են, բնականաբար այն ատեն կը մնայ մեզ՝ իբրև կեղծ հայրենասէրներ, հեռացնել անոնք ազգային հրապարակէն, և ձեռնարկել մի նոր կազմակերպութեան, ժողովրդի նախաձեռնութեամբ: Ահա այս է միակ միջոցը, եթէ չ'ենք ուզեր ամբողջ ազգութիւնը գերեզման դնել:

Թէև հիմայ ներքին կազմակերպութեան միջոց չ'ունինք, որովհետև ժամանակը հասած է, Եւրոպ. պատերազմի ծագումը կ'նշմարտուի, ընդհանուր վտանգ մը կ'ընդառնայ ամբողջ աշխարհի. Հայութիւնը՝ Ռուսութուրը պատերազմէն կորուսած առիթն այս անգամ ալ կորսընցնելու կայութեան մէջ է. քանի որ չ'ունինք առայժմ ներքին ոյժ, գոնէ հայ ժողովուրդը, զինուինք, պատարաստուինք, շարժուն վիճակի մէջ սպասենք և ի հարկին դիմադրենք թշնամիին, այսպէս իւրաքանչիւր հայ իր կեանքը միայն փրկելով իր մարդկային պարտականութիւնը կատարած կ'ըլլայ, որովհետև եթէ սպասենք, մեր յեղափոխ. կուսակցութիւններէն, անոնք՝ զբաղուած են ներքին կռիւներով:

Մենք մեր գլխին ճարը տեսնանք:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

«Միութեան»ի հարցումին պատասխանները.

6 փետրուար Վառնա

Միութեան փափաքը հետզհետէ կը տարածուի և մեծ ընդունելութիւն կը գտնէ այսօր: Տեղւոյս հայ գաղութականութեան մէջ, այսօր 7-8 բաժանումներ կան, բայց բոլոր բաժանմանց անդամք պատրաստ են միմեանց եղբայրական ձեռք կառկարել, երկու անգամ եղաւ որ տեղւոյս Պուլկար ընկերվարականներու ժողովարարահին մէջ «Միութեան» խնդիր կ'առաջարկուի, սակայն ցաւ ի սիրտ մինչև ցարդ խօսողներ չ'են պակիր, բայց գործնական արդիւնք մինչև այսօր չ'կրցինք տեսնել, յառաջիկայ կիւրակէ կրկին այդ խնդրով պիտի զբաղի ժողովը. արդիւնքը կը գրեմ:

Մեր ժողովուրդը կորսնցուցած իր տունն ու տեղ, ծնազ, ամուսին, զաւակ, օտարութեան մէջ կը թափառի գլխիկոր, պէտք չ'է դարման խորհինք. այո՛ Յեղափոխական կուսակցութիւնները աշխատեցան, այդ անուրանալի է, սակայն երբ այսօր կորստեան վիճին եղբերը կը դեգերի նոյն այն իրենց սիրած ու փրկութեան աշխատած ժողովուրդը. միթէ ներելի է անտարբեր մնալ այդ աղէկտուր տեսարանին հանդէպ, պէտք է ուժերը միանան, դարմանը խորհին. ժամանակի անիւը արագաբար կը թաւալի, ժողովրդի ոյժերը կ'ըսպառնին:

Ամբողջ ազգի և Հայրենիքի ազատութիւնն երկու կուսակցութեանց ձեռքն է, իրենք պատասխանատու են մարդկութեան և ապագայ պատմութեան առջև: Երբ յեղափոխական մարմին մը կ'ուզէ իր նպատակակետին հասնիլ, պարտաւոր է անկեղծօրէն ձեռք երկընցնել իր հարազատներու, որպէսզի աւելի մեծ ուժով մարտնչելու կարող ըլլայ, այս է ժողովրդի փափաքը, այս է արդի վիճակնուս պահանջը և այս պիտի ըլլայ մեր փրկութեան միակ միջոցը, երբ կ'ըսենք թէ «զատ զատ կուսակցութիւններու աշխատութեամբ պիտի ազատուինք» մենք մեզի կը խաբենք: Զեր թերթի 7 թիւի մէջ երեք առաջարկ ներկայացուցած էիք, որոնց իմ կողմանէ կը փութամ պատասխանել: Ա. ի սրտէ կը փափաքինք, Բ. Բանի

որ առայժմ նոր Ձուլում ան կարելի է գէթ համեմատաբար գործել, (թէև ձուլումը ամենէն գովելի է ըստ իս,) Գ. Միակ միջոցն է փոխել այն ամէն վարչութեան կամ պիւռօի անդամներ որոնք կուսակցական ոգի կրելով հակառակ են «Միութեան» գաղափարին: Տանջուող տառապող չարչարող ժողովուրդը պատրաստ է Միութեան փրկարար ձայնին հետեւելու, միայն թէ կուսակցական ոգւով գործուն գործիչներ են որ իրենց կըրից զոհել կուզեն Ազգին շահը, հայրենեաց փրկութեան յոյսը: Կարծեմ ժամանակն է այլ ևս, որ այս հարցս տահաբեալ, ջարդուած, թշուառացած ժողովրդի վիճակը ինչ որ կը պահանջէր զայն գործենք, մէկդի դնենք մեր զգուշի «Նոզկալի» (Ես)ը:

ԱԶԳԻՆ ՄԻԱԿ ԲԱՂԱՅՆՔՆ ԱՅՍ Է:

ԱԼԻՍԻ ՈՐԴԵԳԻՐԸ

24 Յունուար Վիլնէմստորֆ,

Միութեան գաղափարը, մեզ 16 Հայ ուսանողներս սիրաբաշխ ըրաւ: «Միութեան» արդէն իր անունովը բուրաստանի պէս անոյշ կը հոտի, հայ ժողովրդի համար շատ փառելի ու պաշտելի է Միութեանը, քանի որ իր նպատակն է ուղիղ և ճիշդը լոկ Հայրենասիրական: Այո՛, մենք տարաբաղդ ուսանողներս, շատ ուրախ եղանք, բայց երջանիկ պիտի ըլլանք այն ատեն միայն, երբ Միութեան Սուրբ Դրօշին տակ հաւաքուելով՝ միաբան աշխատենք մեր արիւնջուայ Հայրենիքի փրկութեանը և լուծենք մեր վրէժը ներոնատիպ ճիւղ Սուլթանէն...: Որքան քաղցր կը հնչէ Հայոցս ականջին նուիրագործեալ սրբազան միութեան ձայնը: Գիտով միայն կրնանք փրկուիլ: Բա՛ւ է ալ կարծենք եսասիրութեան ետեւէն վազել ու դիմակաւոր խաբեբայ ազգասէրներու կուրօրէն ծառայելը...:

Մենք, Վիլնէմստորֆի 16 ուսանողներս, ի սրտէ համակիր ու համակարծիք ենք Միութեան, մեր կարծիքն այս է:

Ա. Կատարեալապէս կը բաղձանք միութեան:

Բ. Ընդհանուր ձուլում բոլոր յեղափոխական մարմիններու միջև, իսկ եթէ ձուլումն անկարելի է, գէթ համեմատաբար գործեն բոլոր յեղափո-

է յաւական մարմինները (Հնչակ, Դր-
շակ, Էն. Էն.)

Գ. Միաձայն հաւանութեամբ գոր-
ծող կեդր. մարմին մը ընտրել, ահա-
նաւոր ու կարող անձնաւորութիւն-
ներէ, որոնք վայելեն Ազգին ընդհ.
սէրն ու համակրութիւնը, չճանչնալ
ո՛րէն է «պիւռ» կամ «վարչութիւն»
ընդհ. որոշումով ընդունել Մ ր ա-
գ ի ր ք:

* * *

Գերմանիոյ մէջ յուզումը ծայ-
րայեղ է ժողովրդին մէջ, Մեծ-Մար-
դասպանին դէմ: Գերմ-Հայկական բո-
միթէներ կազմուած են, որոնց մէջ
ամենէն կարեւորն է Բասթօր Սօհ-
մանի ընկերութիւնը. Մեծ-Բասթօրը
ամեն կողմ միթիւններ գումարեց,
բայց երբ տեղական կառավարութե-
նէն արգելքներ տեսան, հիմայ երէց-
ները եկեղեցիներու մէջ անվար ու
ազդու կը քարոզեն և օգնութիւն ու
գլխութիւն կը պօռն տառապեալ
Հայաստանցիի համար և վրէժ կ'ա-
ղաղակեն ներոնատիպ Համիտէն:

Զուլցերիոյ և Գերմանիոյ մէջ մեծ
դեր ունի, Բասթօր Յակոբ Շէհվլէտ
Հայ պատուական երէցը, որ շա-
րունակ այս երկիրներու մէջ ժողո-
վուդները կը յեղաշրջէ դէպի Հայկա-
կան դատը, որը իր շարունակական
գրադումն է: Վերջերս հոս ալ խօսե-
ցաւ եկեղեցւոյ մէջ, իր պերճաբան
լեզուաւ Հայկական դատին առթիւ,
նկարագրեց Թուառ Հայաստանցիին
վիճակը: Եկեղեցւոյ մէջ անմիջապէս
հանդանակութիւն մը բացուելով 200
մարդ հաւաքուեցաւ ի նպաստ տա-
ռապեալ Հայերուն:

Բասթօր Յակոբ Շէհվլէտ կար-
բաց «Միութիւն» թերթը, որուն վը-
նոյ մեծ աէր և համակրութիւն ցոյց
ոպով՝ խօստացաւ գրել միութեան
վրայ:

ԿԵՑԵՄ ՄԻՌԻԹԻՐՆ

Ի Դիմաց 16 Հայ ուսանողաց

Ղ. Մ.

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

(Մեր մասնաւոր թղթակցէն)

Ինչպէս նախորդ նամակաւս գրել
յօստացած էի Զեզ, տեղա Միութեան
տղափարի տարածման համար գու-
րարելի ժողովի արդիւնքը, այսօր կու-
ամ խօստումս կատարել:

Փետրուար 1 Կիւրակէ օրը՝ Հայ-
կական ընդհ. ժողով գումարուեցաւ,
(Մասս-Միթիւն) բազմաթիւ Հայեր
ներկայ էին, ուր երկար վիճաբանու-
թենէ մը յետոյ, Լովրէնսի Հիվըլի,
և Լով լլի մէջ գումարուած ժողով-
ներու հետ, երեքն ալ միաձայն քո-
ւէարկութեամբ որոշեցին գրել Հըն-
չակեան կուսակցութեան կեդրոնին Ի
Լօնտօն, և Դաշնակցութեան պիւ-
ռօյին ի Ժընէվ, որպէսզի միանան և
համերաշխութեամբ գործեն, իսկ եթէ
յիշեալ երկու կուսակցութիւնները,
բացասական պատասխանով մը կա-
րեւորութիւն չ'տալով մերձին, ժո-
ղովուրդը միանալով պիտի որոշէ ա-
ռանձին գործել, առանց ճանչնալու
այդ կուսակցութիւնները իբրեւ ազ-
գային մարմին: Այդ երկու կուսակ-
ցութեանց հետ գրաւոր բանակցու-
թիւններ ընելու համար կազմուեցաւ
մի մասնախումբ՝ որ այս օրերս գոր-
ծի պիտի սկսի: Լսած ենք թէ՛ մօտ
օրերս Ուստրի մէջ Հայ գաղթականու-
թիւնն ալ այս նպատակով մի ընդհ.
ժողով պիտի գումարէ, որուն ար-
դիւնքը պարտք կը համարիմ գրել
Զեզ:

1897

ԶԱԴՈՒՉ

Վուօրչէսթըր-Մաս.

(Լ.մերիկայ)

ՆԱՄԱԿ ԼՕՆՏՈՆԷՆ

«Միութիւն» ի 7րդ համարին
մէջ կարգացի ձեր հարցումը, միաբը
քանչեղի է, բայց յեղափոխական
կուսակցութիւնները միացնելու, և
կամ մի նոր կեդրոն կազմակերպելու
համար, քուէհամարով իսկապէս ոչ-
ինչ պարզուիլ չէ կարող և ոչ ալ
արդիւնք մը առաջ բերել:

Ընդհանուր հայութեան միա-
փաքելի այդ դժուար լուծելի հար-
ցը, աւելի լայն ուսումնասիրելու
պէտք ունի, մանաւանդ այս խառ-
նաշփոթ ժամանակներս: Ուստի ան-
հրաժեշտ հարցը դարձնել օրուան
խնդիր, որը վիճաբանութեան են-
թարկելով պէտք է խնդրին իրա-
գործման համապատասխանող բո-
լոր դիտողագրերը ու լուրջ առա-
ջարկները ամփոփ կերպիւ մի առ մի
տողագրել, բայց ոչ թէ «Միութիւն»
ամսաթերթի մէջ, այլ մի աւելի

փոքր ծախքերու տակ մտնելով մի
շարաթեայ կամ տասնօրեայ թուո-
ցիկ թերթերու մէջ, որպէսզի հնար
լինի 2-3 ամսի միջոցում հարցը բո-
կարելոյն պարզել և անոր իրակա-
նացումը փութացնել:

Նախկին Հնչակեան

ՍՕՍԻ ԳՈՐԳԱՐ

ԼՕՆՏՈՆ

Ի ՆՊԱՍՏ ՄԻՌԻԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

Հրապրոյս խմբագիրներէն Պատ.
Տիար Ե. Օ. որ՝ այժմ Եգիպտոս կը
գտնուի, վերջերս Գահիրէի մէջ մի-
թիւն մը գումարաճ և ի նպաստ Մի-
ութեան գաղափարի ազդու բանա-
խօսութիւն մ'ընելով ծափահարու-
թեամբ ընդունուած է:

Աւելորդ չ'ենք համարիր ըսել
թէ՛ արդէն Հայ հասարակութիւնը
ամէն ուրէք ջերմ համակրութիւն
ցոյց կուտայ այս նուիրական դա-
շափարին. բացի մեր երկու Հան-
րածանօթ Պետերու, որոնք տես-
բօթութեամբ կ'ուզեն Հայկական
խնդիրը վտճել, որպէսզի իրենց ա-
կնկալած ապագայ փառքը ուրիշ-
ներ չը կրնան յախշտակել:

Այս ալ մեր փոյթը չէ, բաւա-
կան է որ մենք չը շեղինք մեր նը-
պատակէն:

«ՄԻՌԻԹԻՐՆ»Ի ՄՐԱԳԻՐԸ

Մեր Պատ. գաղափարակիցները,
քանիցս դիմում ըրած էին խմբագ-
րութեանս և պահանջած էին «Մի-
ութիւն»ի ծրագիրը, բայց որովհե-
տե մենք կուսակցութեան հանգա-
մանք չ'ցուցնելու համար մերժած է-
ինք, սակայն այսօր տեսնելով գա-
ղափարի անակնկալ յառաջդիմութիւ-
նը կը փութանք համապատասխանել
մեր Պատ. ընկերներու պահանջին:

Յառաջիկայ ամսուն պիտի հրա-
տարակենք մեր ծրագիրը մի քանի
յօդուածներէ բաղկացեալ և պիտի
թողունք հասարակութեան լուրջ քն-
նութեան, խնդրելով որ ամէն քա-
ղաքներու մէջ մեր ընկերները փու-
թով ժողով գումարեն և խնդրոյն է-
ական կէտերուն վրայ վիճաբանելով
պատշաճ համարուած մասերը բարե-
փոխելով հաղորդեն խմբագրութեանս:
Որով խնդիրը բաւական պարզուիլ
յետոյ պիտի ձեռնարկենք Բարիդի մէջ
հասարակութեան վս ահուրիւնը շա-

հոգ անձերէ բարկացեալ մի բարձր մասնախումբ կազմել և ջանալ գործնական արդիւնքը յաջաջ բերել :

ԲԱՅ ՆԱՄԱԿ

Սիրելի՛ հայրենակիցներ.

Լօնտոնէն ստացանք «Հնչակեան նախկին ընկերներ» ստորագրութեամբ Ձեր խմբագրած շրջաբերական ամբարարութիւնը, որուն մէջ կարգ մը մանրակրկիտ քննադատութիւններ կ'ընէք Հնչակեան կուսակցութեան դէմ և կը հրաւիրէք հայ ժողովուրդը, որ պէս զի զգուշանայ անոնց դաւերէն ու դադրեցնէ իր նպաստը իր կեղծ նոնց: Կ'աւելցնէք թէ՛ գոյացած դրամը մասնաճիւղերը, իրենց մէջ պահելով ի հարկին գործածել, և այսպէս առաջ տանիլ յեղափ. գործը: Սակայն պէտք է զիտնալ որ, մեր բոլոր ներքին կռիւները՝ այսօր «Հնչակ» և «Դրօշակ» անուններուն վրայ են, արդէն ժողովրդի միտքը դայթակղած է, ուրեմն կարելի չ'է ամբողջ պղծութիւնն այդ անուններուն մէկին կամ միւսին դրօշին ներքեւ համախմբել, չէ՞ որ այդ օրինակ նախանձախնդրական կռիւներով իրական փորձը ցոյց տուաւ թէ՛ մասնակի յեղափ. գործողութիւնները, միշտ փնասակար կ'ըլլան վեզ: Ո՛չ, սիրելի՛ հայրենակիցներ, մենք այս խօսքերը բարեմտութեամբ կ'ուղղենք Ձեզ, և կ'ուղենք հասկցնել թէ՛ եթէ կ'ուզէք Ձեր գաղափարները ծառայեցնել ազգային կենսական շահերուն, պէտք է համակերպիք ժողովրդի արդար պահանջին, ու աշխատիք երկու կուսակցութիւնները հաշտեցնել և մի նոր ընդհ. ժողով գումարելով ջնջել, այդ թերթերու անունները, և այդ ժողովի միացեալ հաւանութեամբ մի նոր անուն տալ, եթէ կ'ուզէք յեղափ. գործը առաջ տանիլ, ինչ որ կը պահանջէ հայ հասարակութիւնը, և ոչ թէ մասնաճիւղերուն առանձին գործել տալով երկպառակտութիւնները սաստկացնել:

Ուրախութեամբ կը տեսնենք որ Ձեր շրջաբերականին մէջ գրած էք հետեւեալ սողերը: «Արծարծեցէ՛ք Միութեան գաղափար, առանց որոյ ոչինչ չ'է կարող ըլլալ»: Քանի որ այդպէս է, փոխանակ Ձեր հրատարակելի թռուցիկ թերթերով Հնչակ-

եան կուսակցութեան տհաճելի անցեալը նկարագրելու, ըստ մեզ աւելի նախընտրելի է այդ հրատարակութիւնները ծառայեցնել «Միութեան» սկզբունքի շուտ ընդ փոյթ իրականացման:

Այլ ևս բաւական է զիրար հաւաքել, այսուհետեւ սկսինք սի քիչ աւելի հաշտ աչօք նայիլ միմեանց, որովհետեւ ժամանակը սուղ է:

«Միութիւն»-ի ՊիտՏՃէն

Միութեան հարցը վիճաբանութեան ենթարկելու և անոր արդիւնքը շուտ առաջ բերելու համար, Լօնտոնի մեր Պատ. Նամակագիրը խորհուրդ կուտայ մեզ, մի քիչ աւելի ծախքերու տակ մտնել, և շաբաթօրեայ թ. Խ. Ա. Ե. Ի. Կ. թերթեր հըրատարակել:

Մենք որովհետեւ չ'ենք ներկայացներ, ոչ մի կուսակցութիւն, ոչ ընկերութիւն և ոչ ալ հանգանակութիւն կ'ուղենք բանալ ի նպատակ «Միութիւն»-ի «Յաւելուած-Միութիւն»-ի որոնց հրատարակութեան համար ինն ամսուան միջոցին՝ բօսթի, թղթի, գրաչարի տպագրութեան և այլ պէտքերու համար ծախսուած է 864 արծաթ ֆր. տառերուն համար վճարուած է 347 ֆր. ընդ ամէնը 1,211 ֆր. որուն փոխարէն մինչեւ այսօր խմբագրութիւնն մի քանի բաժանորդադէն և եգիպտոսի ազգայնոց նուիրատուութենէ ստացած է ընդ ամէնը 186 ֆր. որուն մէկ մասն ալ ապառիկ մնացած է:

Այս ահագին ծախքեր՝ յետոյ տառերին դարձեալ ամբողջացած չ'է, հետեւաբար ստիպուած ենք, «Յաւելուած»-ի նախ՝ առաջին և չորրորդ էջերը սպել, և ապա տառերը ցրուելով վերստին շարել ու երկրորդ և երրորդ էջերը տպագրել, ինչպէս կը հասկցուի վերջին ամենակարեւոր լուրերէն՝ որոնք գրուած են երրորդ էջին մէջ, փոխանակ չորրորդին, որով թէ ժամաւաճառ կ'ըլլանք և թէ աւելորդ ծախքերու կ'ենթարկուինք:

Սա՛ ալ չ'մօռնանք ըսել թէ՛ մեր երկու թերթերու իւրաքանչիւր համարէն 1,000 ական օրինակ կը տրուին և կ'ըսպառին, բայց աւելի պահանջ ըլլալուն համար չ'են բաւել, հետեւաբար ստիպուած ենք յառաջիկայ ամսէն սկսեալ 1,250 ական տը-

պել: Այսպէս բնականաբար ծախքերն ալ մէկ կողմէն աւելնալու վրայ են. արդէն թերթերը մի փոքր պարտքի ենթարկուած են, եթէ այս գրութեամբ չարունակուի, անշուշտ ապագային իր սլարտըը պիտի բաղմապատկուի:

Մեր Պատ. ընթերցողները յառաջիկայ ամսուն երբ կարգան մեր ծրագիրը, պիտի հաւատան թէ՛ նպատակն շահագործել չ'է. մենք չափանդութիւն ցոյց չ'տալու համար միշտ խոհեմութիւն կը համարէինք հրապարակաւ չ'ապրել մեր ներքին նրկական տագնապը, բայց ճշմարտութիւնն արդարութիւն համարելով համարձակեցանք չլրել, որ մեր գաղափարակիցները գոնէ «Յաւելուած»-ի բաժնեգրիները վտւթացնեն զրկել մեզ որով պէթ ծախքերու մէկ մասը ըստանալով գծուարութեանց չը հանդիպինք:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՁԴ

Պօլսոյ վերջին մեծ ցոյցէն ամբողջապէս Ամերիկայ մեկնող, Ստամբուլից Պ. Մարտի-Խոջաօղլու, 23 տարեկան երիտաւարդէն՝ տեղը գտնուող Պ. Պօլսոյ Գալֆահան կ'ընդդէմ որ իւր հասցէն փութով գրել հաճի խմբագրութեանս:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՁԴ

Մեր պատ. յօդուածագիրները սիրոյն համար, «Յաւելուած»-ի վերջին թիւին մէջ, առաջին և վերջին համար ըլլալով հրատարակեալ Պ. Ս. Պատիկ «Բաց նամակ»-ը և Կ. Պօլսէ «Երկու խօսք ալ ինչ» վերնագրերը յօդուածը՝ որոնց երկուքն ալ, ապիսիքն մէկը զինքը պաշտպանած է իսկ միւսն ուրիշ անհատ մը, առհամար իրենց կանխաւ կը ծանուցանենք որ՝ անձնականի վրայ որ և յօդուածներ հակառակ կամ նպատակաւ չը պիտի ընդունուին. երկուսին ընդհանրութեան օգտին համարութիւններ, սիրով կը հրատարակենք:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԻՈՒԹԻՒՆ»-ի

ԱՐՏՈՆԱՏԻՐ Ա. ԳՕԲԲԻՆՈՍ